# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք,
ՀՀ, Լոռու մարզ, Գ.Գեղասար, Հեռ. 077799399
geghasar.lori@mta.gov.am

N 91
*23 մարտ 2020թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ղուկասյան

Կից ուղարկվում է Գեղասար համայնքի ավագանու թիվ 10-Ա, 11-Ա, 12-Ա, 13-Ն և 14-Ա որոշումները:

Առդիր՝ 12 թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վարազդատ Գրիգորյան**

*Կատ. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Մ. Ավետիսյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մարտի 2020թվականի N 10-Ա

### ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.03.2020ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Գեղասար համայանքի ավագանին, որոշում է.

Հաստատել Գեղասար համայնքի 20.03.2020թվականի 3-րդ հերթական նիստի օրակարգը.

1.ՀՀ 2020թվականի պետական բյուջից սուբվեցիա ստանալու նպատակով Գեղասար համայնքում ֆոտովոլտային արևային կայան և արտաքին լուսավորության կառուցման ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը հաստատելու մասին:

2.Գեղասար համայնքին պատկանող ժամանակավոր կացարանը Գեղասար համայնքի բնակչուհի՝ Արմանուշ Մկրտչի Ֆիդանյանին անհատույց սեփականության իրավունքով հանձնելու մասին:

3.Գեղասար համայնքի 2020թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

4.Գեղասար համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մարտի 2020թվականի N 11-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջներով, սուբվեցիա ստանալու նպատակով ՀՀ Կառավարության 16.11.2006թվականի, թիվ 1708-Ն որոշմամբ, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Գեղասար համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել «Գեղասար համայնքում ֆոտովոլտային արևային կայանի և արտաքին լուսավորության կառուցման» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Գեղասար համայնքի ավագանու
2020թվականի մարտի 20-ի թիվ 11-Ա որոշման

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | *Գեղասար համայնքում ֆոտովոլտային արևային կայանի և արտաքին լուսավորության կառուցում:* |
| Մարզ | *Լոռի* |
| Համայնքը /համայնքները | *Գեղասար* |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | *Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից 110կմ,*<br><br>*Մարզկենտրոնից 35կմ:* |
| Համայնքի /բնակավայրի բնակչությունը | *917 մարդ* |
| Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի | *լեռնային համայնք* |
| Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝<br><br>- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,<br><br>- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,<br><br>- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,<br><br>- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ | *Գեղասար համայնքի փողոցները լուսավորված են շուրջ 80%-ով, ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 5կմ , տեղադրված է 29 լեդ էներգիախնայող լուսատուներ, 70 կոնսուլային լուսատուներ , որոնք սնվում են ընդհանուր համակարգից , ինչպես նաև համայնքում ունենք խմելու ջրի պոմպակայան , որը գտնվում է համայնքի ենթակայության տակ և սնվում է ընդհանուր համակարգից:*<br><br>*Ջրահեռացման համակարգ համայնքում չունենք, իսկ ջրամատակարարումը ցանցավորված է 80%-ով, որը գտնվում է անմխիթար վիճակում:*<br><br>*Գազամատակարարումը համայնքում ապահովված է 70%-ով:*<br><br>*Ոռոգման ցանցի համակարգը ապահովված է մասամբ մոտ 50%-ով, ինչը հանդիսանում է ջրի մեծ կորուստների պատճառ :* |
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը | Համայնքի բյուջեից գիշերային լուսավորության և պոմպակայանի աշխատանքի համար ծախսվում է 1.2մլն դրամ: Ինչը էական բեռ է հանդիսանում համայնքի բյուջեի վրա: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է տեղադրել 15կվտ հզորությամբ ֆոտովոլտային կայան, որի արտադրողականությունը կկազմի մոտ տարեկան 25.0 հազար կվտ/ժամ, ինչը ամբողջությամբ կբավարարի |

| | |
|---|---|
| | համայնքի ենթակայության տակ գտնվող էներգասպառող օբյեկտներին, ինչպես նաև նախատեսվում է տեղադրել 15 հատ մետաղական հենասյուն, 6 մ բարձրությամբ, արևային լուսավորության լուսամփոփներով, որով համայնքի լուսավորության տոկոսը կկազմի 95%: |
| Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին | Ծրագրի իրականացման արդյունքում կնվազի համայնքի բյուջեի ծախսերը, որի արդյունքում խնայած միջոցները կտրամադրվեն գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգմանը: Համայնքի զարգացման ռազմավարության հնգամյա ծրագրում ներառված է այլընտրանքային էնեգիայի աղբյուրների ներդրումը համայնքում: Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք ավելի լուսավոր համայնք, բնակչության գիշերային կյանքը կակտիվանա, զբոսանքը կդառնա ավելի ապահով և հաճելի: Համայնքը կխնայի տարեկան 1.2մլն դրամ, ինչը կուղղվի համայնքի այլ առաջնային խնդիրների կարգավորմանը: |
| Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները | 1. Նախագծահաշվային փաստաթղթերի կազմում - 20օր<br>2. Մրցույթի կազմակերպում -20օր<br>3. Հսկողության կազմակերպում<br>4. Շահագործում 01.12.2020թ<br>5. Շինարարական աշխատանքներ 8843.75 հազար դրամ |
| Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի | *Ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են:*<br>*Արդյունքում կավելանա համայնքի կապիտալը շուրջ 9625.0 հազար դրամով, ինչը կհանդիսանա հիմնական միջոց:* |
| Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա | *Ծրագրի շահառու կհանդիսաննա համայնքի 99%-ը զրեթե 900 մարդ: Խնայված միջոցները կներդրվեն սոցիալ- կենցաղային պայմանների բարելավմանը :*<br>*Արևային կայանը տարեկան կարտադրի մոտ 25 հազար կվտ/ժամ էլեկտրաէներգիա, ինչը ամբողջովին կբավարարի համայնքի կարիքները, կտնտեսենք 1.2 մլն դրամ , ինչը կկազմի համայնքի հոսաբնքի վրա ծախսվող գումարի 100%-ը:* |
| Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը | Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն 5 ժամանակավոր աշխատատեղեր, որը կթեթևացնի համայնքի բնակիչների 5 ընտանիքների սոցիալական խնդիրները : |
| Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը | *Նախորդ տարվա վարչական բյուջեն ' 27325.8 հազար դրամ* |

| | Պլանը | Փաստացին | Տոկոսը |
|---|---|---|---|
| *Համայնքի բյուջեի մուտքերը* | 27325.8 | 27955.5 | 102.5 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները***<br>*այդ թվում՝* | 24712.7 | 25382.4 | 102.7 |
| *-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 24712.7 | 25388.4 | 102.7 |
| *- Սեփական եկամուտներ* | 5202.0 | 5871.7 | 112.8 |
| *-Ֆոնդային բյուջեի մուտքեր* | 2613.1 | 2613.1 | 100.0 |
| *-Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 0.00 | 0.00 | 0.0 |
| *-Ֆոնդային բյուջեով տարեսկզբի ազատ մնացորդ* | 2613.1 | 2613. | 100 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 27325.9 | 26297.3 | 96.2 |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 25712.7 | 23752.2 | 96.1 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 2613.1 | 2562.0 | 98.0 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,*** *որից՝* | 2613.1 | 2562.0 | 98.0 |
| *- Ճանապարհաշինություն* | | | |
| *- ջրամատակարարում* | 1250. | 1250.0 | 100.0 |
| *- փողոցային լուսավորություն* | 1050;0 | 999.5 | 95;2 |
| *- գյուղատնտեսություն* | | | |
| *-Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն* | 313.1 | 312.5 | 99.8 |
| - | | | |

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

***26244.4 հազար*** *դրամ.*

| | Պլանը |
|---|---|
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքերի պլանավորում***<br>*այդ թվում՝* | 26244.4 |
| -Համայնքի բյուջեի եկամուտներ | 24546.2 |
| *- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 24546.2 |
| *- սեփական եկամուտներ* | 6210.8 |
| *-Ֆոնդային բյուջեի մուտքեր* | 4400.0 |
| *- Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 2701.8 |
| *-Ֆոնդային բյուջեի տարեկան ազատ մնացորդը* | 1698.2 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,***<br>*որից՝* | 26244.4 |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 24546.2 |
| *-Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 4400.0 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,*** *որից՝* | 4400.0 |
| -Շրջակա միջավայրի պահպանություն | 250.0 |
| -Փողոցների լուսավորում | 3850.0 |
| -Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն | 300.0 |
| - | |

<table>
<tr><td></td><td>-</td></tr>
<tr><td>Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով</td><td>Համայնքի բյուջեի մուտքերը նախատեսվել են 26244.4 հազար դրամ, որից դոտացիա՝ 18335.4 հազար դրամ նախատեսված միջոցներով կատարվելիք ծախսերն են՝
<table>
<tr><td>Համայնքի 2020թ-ի ընդհանուր բյուջեն կազմում է</td><td>26244.4</td></tr>
<tr><td>1. աշխատավարձ</td><td>11016.0</td></tr>
<tr><td>2. ծառայություններ և ապրանքների ձեռքբերում</td><td>2435.2</td></tr>
<tr><td>3. Հատուկ նպատակային այլ նյութեր</td><td>8837.0</td></tr>
<tr><td>4. Սոցիալական օգնություն</td><td>700.0</td></tr>
<tr><td>2. այլ ծախսեր</td><td>1291.4</td></tr>
<tr><td>3. շենք շինությունների շինարարություն</td><td>3550.0</td></tr>
<tr><td>7. Սարքավորումներ</td><td>550.0</td></tr>
<tr><td>8. Նախագծահետազոտական ծախսեր</td><td>300.0</td></tr>
</table>
Վերը նշված բոլոր նախատեսված ծախսերը համայնքի համար համարվում են առաջնային և անհրաժեշտ, ուստի բյուջետային մուտքերի հաշվին նշված ծրագրի ամբողջական իրականացումը անհնարին է: Այդ իսկ պատճառով դիմում ենք սուբվեցիա ստանալու համար:</td></tr>
<tr><td>Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝<br><br>- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 481.25հազար դրամ,<br><br>- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ դրամ,</td><td>9625.0 հազար դրամ (100%)<br><br>- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 481.25 հազար դրամ,<br><br>- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 180.0 հազար դրամ,<br><br>- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 50..0 հազար դրամ,</td></tr>
</table>

| | |
|---|---|
| - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 180.0 հազար դրամ,<br><br>- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 50.0 հազար դրամ,<br><br>- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ __________ դրամ,<br><br>ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը __________ դրամ | |
| Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը | *3850.0 հազար դրամ (40%)* |
| Այլ ներդրողներ | |
| Ծրագրի իրականացման տևողությունը | *Սկիզբը 01.04.2020…թ. Տևողությունը 8 ամիս* |
| Ծրագրի ծախսերը | 1. Նախագծահաշվային փաստաթղթերի կազմում 481.25 հազ.դրամ<br>2. Փորձաքննության արժեք 70.0 հազար<br>3. Տեխնիկական հսկողություն 180.0 հազար<br>4. Հեղինակային հսկողություն 50.0 հազար<br>5. Մրցույթի կազմակերպում -20օր<br>6. Շահագործում 01.12.2020թ<br>7. Ծրագրի ընդհանուր արժեքը 9625.0 հազար, Որից՝ շինարարական ծախսեր՝ 8843.75 հազար, Ծրագրի այլ ծախսեր՝ 781.25հազար: |
| Ամսաթիվ | *31.01.2020թ.* |

☎077799399

Էլ. Փոստ geghasar.lori@mta.gov.am

---

**Համայնքի ղեկավար** **Վարազդատ Գրիգորյան**
(անունը, ազգանունը)

Կ. Տ

Ծրագրի տեխնիկական բնութագիր

Էլեկտրական վահանակները  կտեղադրվեն 3փ, 2նրբ., թիվ 2 հասցեում գտնվող համայնքապետարանի շենքին, որի հզորությունը կկազմի 15կվտ/ժամ: Կայանը տարեկան կարտադրի 1200.0հազար դրամի էլ. էներգիա: Նկատի առնելով, որ համայնքապետարանի էլ. էներգիայի ընդհանուր տարեկան ծախսը կազմում է 1000.0 հազար դրամ, ուստի այս կայանի գործարկումից համայնքը կստանա տարեկան 3000.0հազար դրամի ավելցուկ էներգիա, որը կծախսվի համայնքի այլ կարիքները հոգալու համար: Համայնքում գործող  գիշերային լուսավորության համակարգը կավելանա 15 հենասյուներով արևային  լուսատուներով: Նշված կայանի գործարկումը խթան կհանդիսանա համայնքի բնակչության շրջանում այլընտրանքային խնայողական էներգիայի աղբյուրները կենցաղ մտցնելու համար:

Համայնքի ղեկավար՝                                        Վարազդատ Գրիգորյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մարտի 2020թվականի N 12-Ա

### ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑԱՐԱՆԸ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ՝ ԱՐՄԱՆՈՒՇ ՄԿՐՏՉԻ ՖԻԴԱՆՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Կառավարության 19.02.2004թվականի , թիվ 157-Ն որոշման պահանջները կատարելու մասին և համաձայն Գեղասար համայնքի բնակչուհի՝ Արմանուշ Մկրտչի Ֆիդանյանի դիմումի Գեղասար համայնքի ավագանին տալիս է իր համաձայնությունը և որոշում է.

Գեղասար համայնքին պատկանող ժամանակավոր կացարանը, որը Գեղասար համայնքի բնակչուհի՝ Արմանուշ Մկրտչի Ֆիդանյանը ստացել է աղետի հետևանքով անօթևան մնալու պատճառով և տեղադրված է նրան պատկանող 06-028-0025-0022 ծածկագրի, 3փողոց 2փկղ., թիվ 5 հասցեի 0,128 հա հողամասի վրա, անհատույց սեփականության իրավունքով հանձնել Արմանուշ Մկրտչի Ֆիդանյանին, որպես վերջինիս սեփականատեր:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

20 մարտի 2020թվականի N 13-Ն

## ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի Գեղասար համայնքի ավագանին որոշում. 5.

1.Գեղասար համայնքի 2020թվականի տարեկան բյուջեում կատարել փոփոխություններ բյուջեի 5112 հոդվածի 06.04.01. խումբ ենթախմբից 160.000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ դրամ գումար տեղափոխել 5134 հոդվածի 06.04.01. խումբ ենթախմբին նախագծահետազոտական ծախսերը կատարելու համար, 4891 հոդվածի 11.01.02. խումբ ենթախմբից 150.000/ մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ գումար տեղափոխել 4212 հոդվածի 01.01.01. խումբ ենթախմբին էներգետիկ ծառայություն կատարելու համար:

2.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գեղասար համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գեղասար, 077799399, geghasar.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մարտի 2020թվականի N 14-Ա

### ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Գեղասար համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղասար համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2020թվականի ապրիլի 06-ը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ՄԿՐՏՉՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՆՆԱ

ՍԻՄՈՆՅԱՆ ՎՐԵԺ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԱԶԴԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ**